ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ

ՀԻՄՆԱՎՈՐ ԳԻՏԵԼԻՔՈՎ ԴԵՊԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Թիվ 1(81), 25 ՓԵՏՐՎԱՐ, 2026թ.

ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՇՈՒՐՋ ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ՌԵԿՏՈՐԻ ԳԼԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ

Հունվարի 8-ին Կրթահամալիրի ռեկտոր Մ. Մուրադյանի գլխավորությամբ տեղի է ունեցել «Հանցավորության կանխարգելման 2026-2033 թվականների ռազմավարությունը և դրանից բխող 2026-2028 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» որոշման նախագծի քննարկումը:

Քննարկման ընթացքում ռեկտորը կարևորել է Կրթահամալիրի դերը ռազմավարության համապատասխան դրույթների իրագործման գործընթացում՝ ընդգծելով կրթական, կազմակերպական և փորձագիտական ներուժի նպատակային կիրառման անհրաժեշտությունը:

Քննարկման մասնակիցներին Մ. Մուրադյանը տվել է հանձնարարականներ՝ ուղղված նախագծի մանրակրկիտ ուսումնասիրմանը և դրա վերաբերյալ համապատասխան առաջարկությունների մշակմանը:

Ամփոփելով հանդիպումը՝ ռեկտորն ընդգծել է Կրթահամալիրի համակարգված ներգրավվածության կարևորությունը հանցավորության կանխարգելման պետական քաղաքականության արդյունավետ իրականացման համատեքստում:

ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԸ ՄԵՐ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՆԱՍՅՈՒՆՆ Է, ՄԵՐ ՆԵՐԿԱՅԻ ՊԱՀԱՊԱՆԸ ԵՎ ԱՊԱԳԱՅԻ ԵՐԱՇԽԻՔԸ

Հունվարի 28-ը տոն է, որը միավորում է հպարտությունը, հավատը և վստահությունը վաղվա օրվա նկատմամբ: Այդ օրը նվիրված է Հայոց բանակին՝ պետականության ամենակարևոր հենասյուներից մեկին. ուժ, որը ոչ միայն պաշտպանում է սահմանները, այլև ձևավորում է ազգային դիմագիծը: Հայոց բանակը մեր անկախության կենդանի խորհրդանիշն է, մեր միասնական կամքի մարմնավորումը: Այդ օրը հայ ժողովուրդը կանգ է առնում իր ճանապարհի մի կարևոր հանգրվանում և հայացքն ուղղում է դեպի բանակը՝ գիտակցելով, որ նրա խաղաղ առօրյայի հիմքում կանգնած է զինվորի անքուն պահակությունը և սպայի անտեսանելի, բայց անսահման նվիրումը:

▶ 3

ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՍՈՎՈՐՈՂԸ ԴԱՐՁԵԼ Է ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՂԹՈՂ

2025 թվականի նոյեմբերից մինչև 2026 թվականի հունվարն անցկացվել է լեզվաբանության և բանասիրության ոլորտում գիտական և գիտահետազոտական աշխատանքների միջազգային մրցույթ՝ «Per verbum ad scientias» խորագրով, որը կազմակերպվել է ՌԴ ՆԳՆ Ռոստովի իրավաբանական ինստիտուտի օտար լեզուների ամբիոնի կողմից:

Մրցույթին մասնակցել են Ռուսաստանի Դաշնության, ինչպես նաև մի շարք այլ օտարերկրյա պետությունների ՆԳՆ ուսումնական հաստատությունների սովորողներ: Մրցույթի նպատակն էր խթանել սովորողների գիտահետազոտական ակտիվությունը, բացահայտել տաղանդավոր և գիտական ներուժ ունեցող սովորողներին:

Մրցույթի «Հետազոտության գործնական ուղղվածության համար» անվանակարգում հաղթող է ճանաչվել «Լեզվական պատրաստության հարցերը ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում մասնագիտական կադրերի պատրաստման համատեքստում» թեմայով գիտահետազոտական աշխատանքը:

Աշխատանքի հեղինակը ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման միջին մասնագիտական կրթության 1-ին կուրսի սովորող Միլենա Սարգսյանն է: Գիտական ղեկավարն է

Կրթահամալիրի ՓԾ և ՃԿ ուսումնական ստորաբաժանման ընդհանուր հումանիտար

և սոցիալ-տնտեսագիտական առարկաների ամբիոնի պրոֆեսոր, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Գալինա Ռուսակովան:

Մրցույթում գրանցված հաջողությունը վկայում է Կրթահամալիրում իրականացվող ուսումնական և գիտահետազոտական աշխատանքի արդյունավետության, ինչպես նաև սովորողների գիտական ներուժի զարգացմանն ուղղված հետևողական քաղաքականության մասին:

ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՆ ԱՆՑԿԱՑՐԵԼ ԱՇՏԱՐԱԿՈՒՄ

Աշտարակ խոշորացված համայնքում 2026թ. հունվարի 14-ին տեղի ունեցավ իրազեկման հանդիպում՝ ՀՀ ներքին գործերի նախարարության կրթահամալիրի ներկայացուցիչների մասնակցությամբ: Հանդիպմանը ներկա էին Աշտարակ խոշորացված համայնքի աշխատակազմի ներկայացուցիչներ, վարչական շրջանների ղեկավարներ, դպրոցների աշակերտներ, ուսուցիչներ և ՀՀ ՆԳՆ ոստիկանությունում ծառայության անցնելու հետաքրքրություն ունեցող քաղաքացիներ:

Կրթահամալիրի մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի պետ Արշակ Ավագյանը և նույն բաժնի մասնագետ Լիլիթ Նազարյանն իրազեկման հանդիպման ընթացքում մանրամասն ներկայացրին Կրթահամալիրի գործունեությունը, ծրագրերը և ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայությունում ընդունելության կարգն ու ձևաչափը:

Միջոցառման ընթացքում մասնակիցները հնարավորություն ունեցան ուղղելու իրենց հարցերը, ծանոթանալու ինչպես Կրթահամալիրի առաջարկած ուսումնական ծրագրերին, այնպես էլ ՀՀ ՆԳՆ ոստիկանության, հատկապես՝ Պարեկային ծառայության առանձնահատկություններին:

Հանդիպումն ամրապնդեց համայնք - պետական կառույց համագործակցությունը՝ խթանելով երիտասարդների իրազեկվածությունն իրավապահ ոլորտի կարիերային ուղիների վերաբերյալ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀՀ ՆԳՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Հունվարի 21-ին տեղի ունեցավ ՆԳՆ կրթահամալիրի և ոստիկանական ուսումնական ստորաբաժանման ղեկավար կազմի հանդիպումը «Քրեական ոստիկան» որակավորմամբ 2025-2026 ուսումնական տարվա ընդունելության մրցույթով անցած և Կրթահամալիրում հունվարի 19-ից վերապատրաստման դասընթացին մասնակցող ոստիկանության ծառայողների հետ:

Ուսումնառության մեկնարկի կապակցությամբ ռեկտոր Մանուկ Մուրադյանը շնորհավորեց վերապատրաստում անցնող 47 ծառայողներին, հաջողություն մաղթեց և հույս հայտնեց, որ նրանք վերապատրաստման դասընթացի ավարտական համալիր քննությունը ևս պատվով կհաղթահարեն:

Մ. Մուրադյանը, ողջունելով քրեական ոստիկան դառնալու նրանց ցանկությունը, հայտնեց, որ Կրթահամալիրում պատրաստակամ են ընդառաջելու ուսումնական գործընթացում ծագած խնդիրներին լուծում տալու հարցերում:

Ռեկտորը միաժամանակ հավելեց, որ, նրանք պաշտոնների նշանակվելուց հետո ևս հնարավորություն կունենան օպերատիվ աշխատանքի մասնագիտական նրբություններին և հմտություններին ամբողջ խորությամբ տիրապետելու՝ շարունակական վերապատրաստում անցնելով Կրթահամալիրի ամենամյա պարտադիր վերապատրաստումների ծրագրով:

ՄԵԿՕՐՅԱ ԴԱՍԸՆԹԱՑ՝ «ՀԱՏՈՒԿ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՆՁԱՆՑ ՈՒՂԵԿՑՈՒՄ՝ ՆՐԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ

Հայաստանի Հանրապետության և Բելգիայի Թագավորության ներքին գործերի նախարարների հանդիպման ընթացքում ձեռք բերված պայմանավորվածության շրջանակներում ս.թ. հունվարի 20-ին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում անցկացվեց մեկօրյա դասընթաց՝ «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց ուղեկցում՝ նրանց մասնակցությամբ իրականացվող միջոցառումների ընթացքում» թեմայով:

Դասընթացը վարեցին Բելգիայի Թագավորության դաշնային ոստիկանության փորձագետներ Ջիլ Լիբերլուն և Քրիստոֆ Թոնուսը: Օրակարգում Բրյուսելում Եվրոպական Միության գագաթնաժողովի ոստիկանական կառավարման փորձի ներկայացումն էր: Դասընթացին մասնակցեցին ՀՀ ՆԳՆ ոստիկանության գվարդիայի և պարեկային ծառայության 15 ծառայող, ինչպես նաև Կրթահամալիրի 2 դասախոս:

Ներկաներին ողջունեց Կրթահամալիրի ռեկտոր Մ. Մուրադյանը՝ ընդգծելով միջոցառման կարևորությունը, և վստահություն հայտնեց, որ այն կընթանա արդյունավետ ու բովանդակային քննարկումների մթնոլորտում:

Փորձագետների փոխանցմամբ՝ ԵՄ գագաթնաժողովների մասնակիցների ուղեկցումը ենթադրում է մի շարք ընթացակարգեր, որոնք նպատակ ունեն ապահովել բարձրաստիճան հյուրերի, հանրության, ճանապարհների անվտանգությունը և ապահովել երթևեկության անխափան հոսքը:

Դասընթացի մասնակիցները հարցեր ուղղելու և յուրաքանչյուր գործողության վերաբերյալ մանրամասն պարզաբանում ստանալու հնարավորություն ունեցան, միաժամանակ ներկայացվեց ավտոշարասյունների ուղեկցման հայկական փորձը:

ՈՒՍՈՒՄՆԱՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԱՅՑ ԻՍՊԱՆԻԱ

«Ներքին գործերի նախարարության և ոստիկանության ծառայության մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացում (PERSEUS)» ծրագրի շրջանակում ՀՀ ներքին գործերի նախարարության կրթահամալիրի ուսումնական գործընթացի կազմակերպման, վերահսկման և շարունակական կրթության ապահովման բաժնի պետ Արտակ Մնացականյանը հունվարի 19-23-ը ուսումնաճանաչողական այցով ՆԳՆ մի խումբ ծառայողների հետ գործուղվել էր Իսպանիայի Թագավորության Մադրիդ քաղաք:

Այցի ընթացքում պատվիրակության անդամները ծանոթացել են հյուրընկալող երկրում իրավապահ կառույցների գործունեությանը, այդ թվում՝ Իսպանիայի ներքին գործերի նախարարության ազգային ոստիկանության և քաղաքացիական գվարդիայի կրթական համակարգին, ինչպես նաև Իսպանիայում ԵՄ իրավապահ համակարգի վերապատրաստման մարմնի (CEPOL) ազգային ստորաբաժանման գործունեությանն ու կառուցվածքին: Հյուրերին ներկայացվել է Ազգային ոստիկանության կազմակերպումն ու պլանավորումը, մասնավորապես՝ կադրային ռեսուրսներն ու ուսուցումը, ոստիկանության ուսումնական ծրագրերը, մասնագիտական պատրաստության և որակավորման բարձրացման գործընթացը: Քաղաքացիական գվարդիայի գլխավոր վարչությունում, Գվարդիայի սպաների ակադեմիայում և Համալսարանական կենտրոնում հանդիպումների և այցելության ընթացքում պատվիրակությունը ծանոթացել է կրթական քաղաքականության մշակման գործընթացին, կրթական ծրագրերին, շարունակական կրթության վերապատրաստման դասընթացներին, դասավանդման համակարգի, ինչպես նաև պաշտոնների նշանակվելու առանձնահատկություններին, ներկայացվել է նաև մասնագիտական առաջխաղացման և արդյունավետության գնահատման փորձը:

ՄԵԶ ԲԱՑԱԿԱ ՉԴՆԵՔ

Հունվարի 27-ը Հայաստանում պաշտոնապես հայտարարվել է Հայրենիքի պաշտպանության համար զոհվածների հիշատակի օր: Օր, որը միավորում է բոլոր ժամանակների զոհվածներին՝ անկախ ծառայության բնույթից և տեսակից՝ զինվորներ, ոստիկաններ, զինված ուժերի ծառայողներ կամ քաղաքացիներ. բոլոր նրանց, ովքեր իրենց կյանքը նվիրաբերել են հանուն մեր երկրի խաղաղության ու անվտանգության: Նրանք այսօր մեզ հետ չեն, բայց մեր խաղաղ օրերի մեջ են:

Ծառայության առանձնահատկություններով պայմանավորված՝ ՆԳՆ ծառայողները ևս մշտապես կանգնել են օրենքի, կարգի և հայրենիքի պահպանության առաջնագծում՝ վտանգելով սեփական կյանքը՝ հանուն հասարակության անվտանգության և պետության հիմքերի պահպանման: Նրանք իրենց ծառայությամբ պաշտպանել են քաղաքացուն ինչպես խաղաղ ժամանակներում, այնպես էլ մեր ազգի համար առավել ծանր օրերին:

Հայրենիքի պաշտպանության գործից անմասն չեն մնացել նաև ՆԳՆ կրթահամալիրի սաները, ովքեր իրենց ուսումն ու երիտասարդ տարիները փոխարինեցին ծառայությամբ՝ կանգնելով հայրենիքի պաշտպանության ճանապարհին: Նրանց նվիրումը վկայություն էր հասարակության ու պետության նկատմամբ բարձր պատասխանատվության և հայրենիքին բոլորանվեր ծառայելու գիտակցված ընտրության:

«Մեզ բացակա չդնեք...». այս բառերն այսօր մեկ անգամ ևս կոչ են՝ պահպանելու հիշողությունը նրանց նկատմամբ, ովքեր իրենց ծառայությունը կատարելիս մեզանից հեռացել են:

Չմոռանա՛նք նրանց, ովքեր իրենց կյանքը տվել են հանուն մեր այսօրվա գոյության և վաղվա լավ ապագայի երաշխավորման:

Հիշատակի օր՝ նշանակում է ոչ միայն խոնարհվել, այլ նաև գիտակցել, որ հիշողությունը և երախտագիտությունը կարող են և պետք է լինեն ազգային միասնականության կարևոր բաղադրիչ: Այդ միասնականությունը չի սահմանափակվում միայն կորստի գիտակցմամբ, այլ ամրապնդվում է մեր արժեհամակարգով և պատրաստակամությամբ՝ յուրաքանչյուրս մեր տեղում շարունակելու հայրենիքին ծառայելու գործը:

Մ. Գ.

ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԸ ՄԵՐ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՆԱՍՅՈՒՆՆ Է, ՄԵՐ ՆԵՐԿԱՅԻ ՊԱՀԱՊԱՆԸ ԵՎ ԱՊԱԳԱՅԻ ԵՐԱՇԽԻՔԸ

1 ◀ 1992 թվականի հունվարի 28-ին պաշտոնապես հիմնադրվեց Հայաստանի Հանրապետության զինված ուժերը: Սակայն Հայոց բանակը ծնվեց ոչ միայն հրամանագրով, այլ ժողովրդի կամքով: Այն ձևավորվեց դժվար ժամանակներում, երբ նորանկախ պետությունն ստիպված էր միաժամանակ կառուցել իր ապագան և պաշտպանել իր գոյությունը: Կամավորական ջոկատներից մինչև կանոնավոր բանակ՝ այդ ճանապարհն անցավ հավատով, համախմբվածությամբ և մի պարզ համոզմամբ՝ հայրենիքը պաշտպանելը սրբազան պարտք է:

Հայոց բանակի պատմությունը փորձությունների ճանապարհ է, բայց նաև կայացման պատմություն: Այն կոփվեց իրական մարտերում, դժվար պայմաններում, երբ պակասը լրացվում էր կամքի ուժով: Տարիների ընթացքում բանակը դարձավ կազմակերպված, կարգապահ ու արժեքահեն կառույց՝ իր ավանդույթներով, ռազմական կրթությամբ և ծառայության մշակույթով: Այստեղ զինվորը սովորում է ոչ միայն զենք կրել, այլ նաև պատասխանատվություն ստանձնել, ընկերոջը վստահել և հայրենիքի գինը հասկանալ:

Հայոց բանակը մարդկանց բանակ է: Նրա սիրտը զինվորն է՝ երիտասարդը, ով մի կողմ է դնում անձնական հարմարավետությունը և կանգնում է ծառայության ճանապարհին: Զինվորի ծառայությունը լուռ է, բայց վճռորոշ: Նրա կանգնած դիրքը սահման է դառնում պետության և վտանգի միջև: Բանակի օրը զինվորն զգում է, որ իր ծառայությունը տեսանելի է, գնահատված է և անհրաժեշտ:

Զինվորի կողքին մշտապես կանգնած է սպան: Հայ սպայի կերպարը բանակի ողնաշարն է: Նրա ծառայությունը պարզապես մասնագիտություն չէ, այլ կյանքի ընտրություն: Սպան այն մարդն է, ով հայրենիքի ծառայությունը վեր է դասում անձնականից ու ընտանեկան հանգստից: Երբ ընտանիքն սպասում է, նա դիրքում է, երբ գիշերը խաղաղ է քաղաքներում, նա արթուն է սահմանին: Նրա օրերն ու գիշերները պատկանում են ծառայությանը:

Հայ սպան ոչ միայն հրամանատար է, այլ առաջնորդ, դաստիարակ ու օրինակ: Նրա համար զինվորը թիվ չէ կամ պարզապես ենթակա: Նա վստահված կյանք է: Սպայի պատասխանատվությունը չափվում է ոչ միայն հրամաններով, այլ հոգատարությամբ, խոհեմությամբ և անձնական օրինակով: Նրա ներկայությունը զինվորին ուժ է տալիս, նրա խոսքը՝ վստահություն, նրա վարքը՝ ուղենիշ:

Հայոց բանակի ճանապարհն անցել է նաև ցավի միջով: Այդ ճանապարհին մենք կրել ենք ծանր կորուստներ: Շատ մարդիկ իրենց կյանքը զոհաբերել են հանուն հայրենիքի, հանուն անկախության ու խաղաղության: Նրանք ընտրեցին ամենաբարձր ծառայությունը՝ կյանքը հայրենիքին նվիրելը: Նրանց հիշատակը բանակի խղճի մի մասն է, նրա ոգու հիմքը: Զոհված հերոսների անունները լուռ պարտավորություն են ներկայի համար՝ լինել արժանի, լինել ուժեղ, լինել միասնական:

Բայց Հայոց բանակի օրը միայն ցավի մասին չէ: Դա շարունակության, կյանքի և հավատքի տոն է: Զոհվածների ճանապարհը շարունակվում է այսօր ծառայող զինվորների ու սպաների մեջ: Բանակն ապրում է նրանց հիշատակով և նրանց թողած պատասխանատվությամբ՝ պաշտպանել, զարգանալ և ամրանալ:

Հունվարի 28-ը համազգային տոն է: Այդ օրը բանակը դուրս է գալիս զորամասերից և մտնում յուրաքանչյուր տուն, յուրաքանչյուր սրտի մեջ: Դպրոցներում, ընտանիքներում, հրապարակներում հպարտությամբ և երախտագիտությամբ է խոսվում բանակի մասին: Բանակի օրը հիշեցնում է, որ բանակը միայն զինվորականներինը չէ. այն ամբողջ ժողովրդի արժեհամակարգն է:

Հայոց բանակը մեր պետականության հենասյունն է, մեր ներկայի պահապանը և ապագայի երաշխիքը: Քանի կա զինվոր, ով հավատով կանգնած է դիրքում, և սպա, ով իր ծառայությունն սկսում է նվիրումից, Հայաստանը կանգուն է լինելու:

Հունվարի 28-ը հենց այդ հավատքի օրն է:

Գայանե Բաբաջանյան
իրավագիտության բաժին,
4-րդ կուրս

ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԸ ՆԵՐԳՐԱՎՎԵԼ Է ԵՄ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՑԱՆՑՈՒՄ

ՀՀ Ներքին գործերի նախարարության կրթահամալիրը պաշտոնապես ներգարվվել է Եվրոպական միության Տիեզերական ցանցի (EU Space Networks) կազմում՝ ստանալով Copernicus Ambassador-ի կարգավիճակ: Այս քայլը կարևոր հանգրվան է Հայաստանի՝ եվրոպական տիեզերական տվյալների, գիտելիքի և նորարարության էկոհամակարգերին ինտեգրվելու գործընթացում:

EU Space Networks-ը միավորում է 63 երկրների 315 մասնագիտացված կազմակերպություններ՝ ընդգրկելով ԵՄ Տիեզերական ծրագրի հիմնական բաղադրիչները՝ Copernicus, Galileo/EGNOS, IRISՍ, ինչպես նաև Տիեզերական իրավիճակային իրազեկում և տիեզերական նավիգացիայի կառավարում (SSA/STM): Ցանցը հիմնված է նախկին Copernicus Academy և Copernicus Relays նախաձեռնությունների վրա և նպատակ ունի խթանելու կրթությունը, հետազոտությունը, տվյալների մշակումը, կարողությունների զարգացումն ու երկխոսությունը տիեզերական տեխնոլոգիաների կիրառման ոլորտում:

Կրթահամալիրի միացումը համակարգին պայմանավորված է նրա դերակատարմամբ՝ որպես առանցքային կրթական հաստատություն աղետների ռիսկի կառավարման, բնակչության պաշտպանության, անվտանգության և ճգնաժամային կառավարման կրթության ու կարողությունների զարգացման ոլորտներում: Անդամակցությունն ընդգծում է նաև հաստատության հանձնառությունը՝ գիտահեն և տվյալահեն մոտեցումների ներդրման ուղղությամբ:

Երկրի դիտարկման տվյալների հասանելիությունը կբարձրացնի կարողությունները ռիսկերի մոնիթորինգի, ազդեցությունների գնահատման, վաղ ազդարարման և հետաղետային վերլուծության ուղղությամբ՝ հատկապես ջրհեղեղների, սողանքների, անտառային հրդեհների, սեյսմիկ և կլիմայական ռիսկերի պարագայում:

Ծրագրին մասնակցությունն ապահովում է հասանելիություն ԵՄ Տիեզերական ծրագրի ուսումնական նյութերին, վեբինարներին, փորձագիտական դասախոսություններին և կարողությունների զարգացման միջոցառումներին: Սա թույլ կտա տիեզերական և արբանյակային տվյալների կիրառումը ներառել փրկարարների, ոստիկանության աշխատակիցների, վերլուծաբանների և ղեկավար կազմի ուսումնական ծրագրերում, ինչպես նաև հետբուհական կրթության և գիտական հետազոտությունների շրջանակում:

Անդամակցությունը նոր հնարավորություններ է ստեղծում միջազգային համատեղ հետազոտությունների, փորձնական նախագծերի և նորարարական լուծումների մշակման համար՝ գեոտարածական վերլուծության, կլիմայի փոփոխությանը հարմարվողականության, կարևոր ենթակառուցվածքների պաշտպանության և անվտանգության ոլորտներում:

Copernicus Ambassador-ի կարգավիճակը ՆԳՆ կրթահամալիրին ապահովում է պաշտոնական ճանաչում՝ որպես ԵՄ Տիեզերական ծրագրի գործընկեր՝ մեծացնելով հաստատության տեսանելիությունը եվրոպական հաղորդակցման հարթակներում, մասնագիտական միջոցառումներում և ցանցային նախաձեռնություններում:

ՊԱՏՎԱԲԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

ՎԱՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ ՎԱՍՏԱԿԵԼՆ ԱՄԵՆՕՐՅԱ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ԱՆԿԵՂԾ ՆՎԻՐՈՒՄԻ ԱՐԴՅՈՒՆՔ Է

Պարտորեն պետք է ասեմ, որ սովորում եմ այնպիսի ուսումնական հաստատությունում, որը յուրաքանչյուրիս համար պատվաբեր է և հետագայում լինելու է պատասխանատու մեր ընտրած մասնագիտության ձևավորման գործում: Այստեղ ոչ միայն մասնագիտական գիտելիքներ ենք ձեռք բերում, այլև ձևավորվում են անձնային այնպիսի արժեքներ, որոնք անհրաժեշտ են յուրաքանչյուրին: Մեր կրթահամալիրում պատվախնդրությունն ու պրոֆեսիոնալիզմը դառնում են հիմնական ուղենիշներ, իսկ պատիվ ու պատասխանատվություն բառերն ստանում են իրական բովանդակություն: Դրանք դադարում են սովորական արտահայտություններ լինելուց և վերածվում են կյանքի իմաստի, համոզմունքի և առաքելության:

Կրթահամալիրում սովորելը պատվաբեր է, քանի որ այստեղ մենք հասկանում ենք՝ վստահություն վաստակելն ամենօրյա աշխատանքի և անկեղծ նվիրումի արդյունք է: Հասարակության վստահությունն իր հերթին մեզ պարտավորեցնում է լինել ավելի զգոն, ավելի ուշադիր և ավելի մասնագիտացված: Մենք գիտակցում ենք, որ ցանկացած պահի կարող ենք օգնել հայրենիքի տարածքում գտնվող այն անձին, ով օգնության կարիք ունի, և այդ համոզմունքը մեզ դարձնում է ավելի ուժեղ ու վստահ:

Այդ վստահությունը պահանջում է պատասխանատվության բարձր զգացում, քանի որ մեր ապագա աշխատանքն ուղղակիորեն առնչվում է մարդկանց կյանքերի, իրավունքների և անվտանգության հետ: Կրթահամալիրում սովորում ենք գնահատել յուրաքանչյուր գործողության հետևանքը, ճիշտ որոշումներ կայացնել և հստակ պատկերացնել մեր պատասխանատվության շրջանակը:

Այստեղ մենք դառնում ենք ավելի կարգապահ, ավելի հետևողական և ավելի պահանջկոտ մեր սեփական աշխատանքի նկատմամբ:

Ուսումնառության ընթացքում զարգանում են նաև մարդկային որակները՝ զոհողություն, ազնվություն, վեհանձնություն, համբերատարություն: Սովորում ենք դժվար իրավիճակներում պահպանել սառնասրտություն, ճիշտ արձագանքել ճնշման պայմաններում և պահպանել հավասարակշռությունը նույնիսկ ամենաբարդ իրավիճակներում:

Մեր կատարած աշխատանքի արդյունքում պաշտպանվում է պետությունը, ապահովվում է պետական համակարգի կայունությունը, և այդ պետության տարածքում ապրող մարդկանց իրավունքները դառնում են առավել պաշտպանված: Մենք գիտակցում ենք, որ ապագայում մեր մասնագիտական գործունեությամբ կարող ենք փրկել բազմաթիվ մարդկային կյանքեր, կանխել վտանգներ, աջակցել կարիքավորներին և ծառայել հանրային շահին:

Այստեղ ձեռք բերած գիտելիքները, հմտությունները և դասերը մեզ ուղեկցելու են ամբողջ կյանքում:

Մեր կրթահամալիրը ոչ միայն կրթում է մասնագետներ, այլ նաև ձևավորում է անհատներ, որոնք անձնվիրաբար նվիրվում են պետության զարգացման, անվտանգության և բարեկեցության սրբազան գործին:

Տաթևիկ Թորոսյան
«Կառավարում» բաժին, 2-րդ կուրս

ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՉ ԹԵ ՎԵՐՋՆԱԿԵՏՆ Է, ԱՅԼ ԱՅՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ, ՈՐԸ ՔԱՅԼՈՒՄ ԵՍ ՔԵԶ ԹԱՆԿ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԵՏ՝ ԱՄԵՆ ՕՐ ՍՏԵՂԾԵԼՈՎ ՄԻ ՓՈՔՐԻԿ ԱՐԺԵՔ

«Կրթահամալիրի սովորողները» խորագրով նախագծի շրջանակներում այս անգամ զրուցել ենք ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի փրկարար ծառայության և ժգնաժամային կառավարման ուսումնական ստորաբաժանման «Կառավարում» բաժնի 4-րդ կուրսի սովորող Ալվինա Գյուլնազարյանի հետ:

- Բարև, Ալվինա՛ ջան, խնդրում եմ երեք նախադասությամբ պատմի՛ր քո մասին, ինչպիսի՞ն էր փոքրիկ Ալվինան:

- Փոքր ժամանակ համառ, չընկճվող և ակտիվ երեխա էի՝ այն երեխաներից, որոնց ձայնը չլսելու դեպքում իրավիճակն ավելի վտանգավոր էր, քան լսելու դեպքում: Միևնույն ժամանակ, եղել եմ կրեատիվ, կենսուրախ և շփվող՝ կարողանալով լեզու գտնել գրեթե յուրաքանչյուրի հետ: Շփումը ինձ համար միշտ բնական է եղել՝ անկախ տարիքից կամ միջավայրից:

- Դրվագներ, որ տպավորվել են մանկության տարիներից:

- Մանկությանս ամենատպավորիչ դրվագներից մեկը կապված է իմ բիզնես մտահղացումների հետ: Մեր բակ էին գալիս գյուղից մարդիկ, ովքեր վաճառում էին թարմ տնական հավ և ձու: Լինելով ընդամենը յոթ տարեկան՝ մեր բակ եկած գյուղացիներին կարողացա համոզել ինձ նվիրել հավի ճտեր, որոնք հենց այդ օրը վաճառեցի: Ընդհանրապես իմ մանկությունը լի է եղել հիշարժան ու տպավորիչ պահերով, սակայն ամենատպավորիչն այն դրվագներն էին, երբ ինձ պատկերացնում էի փոքրիկ բիզնեսմենի դերում: Ամեն անգամ բակ իջնելիս գլխումս միևնույն միտքն էր՝ ինչ մոգոնել այսօր, որպեսզի օրն ավելի հետաքրքիր անցնի: Ինձ համար այս փոքր պատմությունը սովորեցրեց, թե ինչպես կարելի է բիզնես վարել:

- Կպատմե՞ս դպրոցական տարիներից:

- Դպրոցական տարիներս միապաղաղ ու հանգիստ են անցել, բայց դրանք իմ կյանքի ամենահաճելի և ամենաջերմ հիշողություններից են: Դպրոցում եղել եմ շատ ակտիվ և շատախոս աշակերտ, ձեռք եմ բերել այնպիսի ընկերներ, ում հետ առ այսօր շփվում եմ (սկսած 6-րդ դասարանից): Ես փայլել եմ իմ ընկերասիրությամբ, ու ամբողջ դպրոցն այդ հատկության շնորհիվ ինձ ճանաչել է. հնարավորության դեպքում մեծ հաճույքով կվերադառնայի և այնտեղ կանցկացնեի ևս 12 տարի:

- «Փոքրիկ իշխան». Ինչպիսի՞ն է քո ստեղծած այլ մոլորակը:

- Իմ ստեղծած մոլորակը փոքր է, բայց շատ լուսավոր ու գունառատ: Իմ մոլորակում մարդիկ ապրում են երջանիկ և ազատ կյանքով, այն լի է դրականով. հնարավոր է՝ կյանքն այդքան էլ իդեալական չէ, բայց բոլորն անկեղծ են և պատրաստ են օգնել միմյանց: Իմ մոլորակը բոլորին հնարավորություն է տալիս փոխել իրենց կյանքը, կրել վարդագույն ակնոց և սեփական ցանկություններում ուղղակի լինել ազատ:

- Ի՞նչ ես կարծում, կա՞ն վատ գրքեր:

- Կարծում եմ՝ վատ գրքեր չկան, քանի որ յուրաքանչյուրն ունի իր ստեղծման նպատակն ու հասցեատերը: Եթե ընթերցողի համար գիրքը «վատն» է, ապա հնարավոր է՝ այն պարզապես չի համապատասխանում տվյալ պահին նրա ներքին որոնումներին կամ կյանքի նպատակներին: Գիրքը նման է զրուցակցի. եթե ընդհանուր լեզու չեք գտել, դա դեռ չի նշանակում, որ նա ասելիք չունի:

- Քո ընթերցած գրքերից ո՞րն է ամենատպավորիչը

- Ալեքսանդր Շիրվանզադեի «Քաոսը»: Այդ գիրքը տպավորում է իր դաժան ու անկեղծ իրականությամբ, որով բացահայտում է փողի իշխանությունը մարդու վրա և դրա քայքայող ազդեցությունը մարդկային հարաբերությունների ու արժեքների վրա: Շիրվանզադեն կերպարների հոգեբանական խորությունը և նրանց ներքին ապրումներն այնպես է նկարագրում, որ վեպը դարձնում է կենդանի և համոզիչ, իսկ ստեղծած մթնոլորտն ընթերցողին փոխանցում է հասարակության մեջ տիրող բարոյական քաոսի զգացումը:

- Ինչի՞ մասին ես երազում կյանքիդ այս շրջանում:

- Ներկա պահին ես ձգտում եմ զգալ ներքին խաղաղություն և կայունություն, ուզում եմ զարգացնել գիտելիքներս ու հմտություններս: Ցանկանում եմ գտնել իմ տեղը և զբաղվել այն աշխատանքով, որն ինձ ոգեշնչում է: Ինձ համար կարևոր է շրջապատված լինել հետաքրքիր ու ջերմ մարդկանցով և ավելի վստահ լինել առօրյա կյանքում:

- Նախասիրություններ. ի՞նչն է, որ մի քանի ժամով քեզ կտրում է իրական կյանքից:

- Նախասիրություններս շատ են, բայց կառանձնացնեմ սպորտը, սեղանի և օնլայն խաղերը, ինչպես նաև՝ ժամանցն ընկերների հետ:

- Ինչպե՞ս ընտրեցիր այս մասնագիտությունը:

- Ինձ միշտ գրավել է այն զգացումը, որ կարող ես ինչ-որ բան փոխել ուրիշի կյանքում: Սիրում եմ էքստրեմալ պայմաններ, որտեղ վայրկյաններն են որոշում ամեն ինչ: Փրկարարի մասնագիտությունն ինձ համար ուղղակի աշխատանք չէ, այլ հոգեվիճակ և կոչում: Հավատում եմ, որ փրկարարի ամեն աշխատանքային օրը տուժածին նվիրված մի ամբողջ կյանք է: Փրկարար լինել՝ նշանակում է սեփական անձից վեր դասել դիմացինի ապրելու իրավունքը, և հենց այդ անձնազոհությունն է մասնագիտությունը դարձնում վեհ ու հերոսական:

- Ինչպիսի՞ն է Կրթահամալիրում ուսանողական կյանքը:

- Ես՝ որպես ուսանող, ակտիվ եմ, նախաձեռնող ու հետաքրքրասեր: Կողմ եմ այն մտքին, որ ուսանողական կյանքը կարող է լինել նաև լսարանից դուրս: Կյանքը կրթահամալիրում լցված է դասերով, հետաքրքիր նախագծերով և ընկերներով, որոնց հետ կարող եմ կիսել իմ հետաքրքրությունները: Ես գնահատում եմ մեր դասախոսների մոտեցումը, քրտնաջան աշխատանքը և այն, որ իմ նպատակներին ձգտելու ընթացքում կարող եմ ստանալ նրանց աջակցությունը:

- Եթե հնարավորություն տրվեր փոխելու մասնագիտությունդ, ի՞նչ կընտրեիր:

- Ինձ համար փրկարարի մասնագիտությունը շատ կարևոր և անփոխարինելի է, սակայն եթե ստիպված լինեի փոխել, հավանաբար կընտրեի դարձյալ հայրենիքիս ծառայելը:

- Ո՞րն է երջանիկ լինելու քո բանաձևը:

- Ինձ համար երջանիկ լինելու բանաձևը բաղկացած է ներքին խաղաղությունից, ընտանիքիս ու ընկերներիս ներկայությունից և այն գիտակցումից, որ զբաղված եմ ինձ ոգեշնչող գործով: Երջանկությունը ոչ թե վերջնակետն է, այլ այն ճանապարհը, որը քայլում ես քեզ թանկ մարդկանց հետ՝ ամեն օր ստեղծելով մի փոքրիկ արժեք:

- Թեմա, որի շուրջ անդադար կխոսես:

- Կյանքի իմաստի, մարդկային հարաբերությունների, ինքնաճանաչման և սեփական նպատակների մասին: Իմ համոզմամբ՝ մարդու ներաշխարհն ու նրա ձգտումներն ամենաանսպառ թեմաներն են, որոնք միշտ բացահայտվում են նորովի:

- Ո՞րն է կյանքի շարժիչ ուժը քեզ համար:

- Կյանքի շարժիչ ուժն ինձ համար նպատակասլացությունն է: Դա մարդկանց օգտակար լինելու և սեփական նպատակներին հասնելու այն ներքին ծարավն է, որը թույլ չի տալիս կանգ առնել նույնիսկ ամենաբարդ արգելքների առջև:

Բլից հարցեր
(պատասխանում ենք կարճ և արագ)

- Երեք բառ, որով կբնորոշես ինքդ քեզ:

- Նպատակասլաց, խարիզմատիկ, համառ:

- Միտք, որն առաջինը ծագում է արթնանալիս:

- Ինչպե՞ս հետաձգել բոլոր գործերս:

- Օրն սկսում ես ժամը...

- 08:00-ին:

- Սիրածդ աֆորիզմը:

- «Եթե դուք ի վիճակի չեք փոխել ձեր ապրելակերպը, ապա ոչ ոք և ոչինչ ձեզ չի օգնի»:

- Սիրելի զբաղմունքդ:

- Սպորտը և ակտիվ ժամանցը:

- Խորհուրդ, որը կտայիր:

- Չվախենալ սխալվելուց, որովհետև սխալները կարելի է ուղղել, իսկ կորցրած ժամանակը՝ ոչ:

- Իսկ վերջում...

- Խորհուրդ կտայի երբեք չվախենալ սխալվելուց. սխալները կարելի է ուղղել, դրանք մեզ դարձնում են փորձառու, բայց բաց թողնված ժամանակն ու չօգտագործված հնարավորությունները հետ բերելն անհնար է: Այս հարցազրույցն ինձ համար կարևոր կանգառ էր՝ մեկ անգամ ևս վերաարժևորելու անցածս ճանապարհն ու ավելի վստահ հայացքով նայելու այն ապագային, որը դեռ պիտի կերտեմ:

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ ՀԵՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԸ

2025 թ. դեկտեմբերին հրատարակվել է «Դասավանդման մեթոդիկա ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի դասախոսների համար» ուսումնամեթոդական ձեռնարկը, որի հեղինակն է ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի փրկարար ծառայության և ճգնաժամային կառավարման ուսումնական ստորաբաժանման ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական առարկաների ամբիոնի պրոֆեսոր, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Գ. Ա. Ռուսակովան:

Ձեռնարկը մշակվել է որպես գործնական ուղեցույց Կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական կազմի համար՝ նպատակ ունենալով բարձրացնել մանկավարժական գործունեության արդյունավետությունը, կատարելագործել դասավանդման մեթոդաբանությունը:

Ձեռնարկում ներկայացված են դասավանդման մեթոդիկայի հիմնական բաղադրիչները՝ ուսումնական դասընթացների պլանավորումից և արդյունավետ ուսուցման մեթոդների կիրառությունից մինչև ուսուցման գործընթացի գնահատման, վերահսկման և որակի շարունակական բարձրացման հարցերը:

Ստեղծագործում են մերոնք

Հայրենիք

Պատերազմը սկսվում է լռությունից,
Երբ բառերն այլևս չեն փրկում,
Երբ խոսքերն այլևս տեղ չեն հասնում,
Երբ հայրենիքը դառնում է սահման, իսկ անունը՝ թիրախ:

Այնտեղ հայրենիքը քարտեզ չէ,
Այլ՝ ընկերոջդ վերջին շունչը,
Եվ ձեռքիդ մեջ սառչող նրա մատները,
Եվ այն աչքերը, որ այլևս չեն բացվելու:

Մենք սովորեցինք նայել վախի աչքերի մեջ,
Քնել հողի մեջ, ոչ թե նրա վրա,
Եվ ապրել մի օր էլ՝
Ոչ թե երազելով, այլ դիմանալով:

Մենք սովորեցինք ճանաչել ընկերներին,
Քայլերի ձայնից ու արձակած շնչից,
Որովհետև մթության մեջ դեմքեր չկային,
Կային միայն մարդիկ, որոնց չպետք է կորցնեիր:

Մենք սովորեցինք նորովի սիրել ու կարևորել
յուրաքանչյուր պահը,
Սովորեցինք գնահատել անցյալը՝ որպես կյանքի մեծ դաս,
Սովորեցինք ընդունել ու արժևորել ներկան,
Սովորեցինք ամենակարևորը՝ ներել ու բաց թողնել...

Եվ քանի դեռ մեր սրտերում կա սեր ու հավատ,
Քանի դեռ կա հիշողություն ու երգ,
Ոչ մի պատերազմ չի կարող խլել մեր Հայրենիքը,
Այդ Հայրենիքը կապրի մեր մեջ՝ որպես լույս,
որպես ուժ, որպես վերածնունդ:

Զարուհի Պետրոսյան
«Իրավագիտություն» մասնագիտության
բակալավրիատ, 4-րդ կուրս

ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԱՆԿՅՈՒՆ

Դատավորը և ամբաստանյալը

Դատավորը որոշեց պատժել ամբաստանյալին՝ խնդրելով նրան հայտարարություն անել:

Եթե դատավորը հավատա, որ ամբաստանյալը ճշմարտությունն է ասում, նրան կախաղան կբարձրացնեն, եթե ստի, նրան կգնդակահարեն:

Հարց. Ի՞նչ հայտարարություն պետք է անի ամբաստանյալը՝ ողջ մնալու համար:

Բանտարկյալն ասաց. «Ինձ կգնդակահարեն»:

Եթե դատավորը որոշի, որ այս պնդումը ճիշտ է, ամբաստանյալը պետք է գնդակահարվի: Սակայն սա հակասում է պայմանին, քանի որ եթե պնդումը ճիշտ է, ամբաստանյալը պետք է կախաղան բարձրացվի:

Եթե դատավորը գտնի, որ հայտարարությունը կեղծ է, ամբաստանյալը պետք է կախաղան բարձրացվի: Սակայն սա հակասում է որոշմանը, քանի որ հայտարարության կեղծ լինելը նշանակում է, որ ամբաստանյալը պետք է գնդակահարվի:

Պարադոքսն առաջանում է, քանի որ դատավորի ընտրած ցանկացած տարբերակ հանգեցնում է հակասության: Այս պարադոքսը նշանակում է, որ դատավորը չի կարող տրամաբանորեն որոշել՝ արդյոք պնդումը ճի՞շտ է, թե՝ սխալ՝ առանց ինքն իրեն հակասելու:

Հետևաբար, դատավորը պետք է խնայի ամբաստանյալի կյանքը:

ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ
Լրատվական գործունեություն իրականացնող ՀՀ ՆԳՆ կրթահամալիր ՊՈԱԿ, հասցե՝ ք. Երևան, Ծովակալ Իսակովի փողոց, 29, հեռախոս՝ 010 77 08 73:
Գրանցման վկայական՝ 29021003884:
Տպագրվել է «Աստղիկ Գրատուն» հրատարակչությունում:
Ծավալը՝ 1 մամուլ: Տպաքանակը՝ 100 օրինակ:
Ստորագրված է տպագրության 24.02. 2026թ.:
Համակարգչային շարվածքը՝ «Պատիվ ունեմ» ամսաթերթի:
Գլխավոր խմբագիր՝ Արուսյակ Քոչարյան